# ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿ, ԵՐԿՈՒ ՄՈՏԵՑՈՒՄ

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՄԻՈՒԹՅԱՆ (ՍԻՄ) ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՀՀ ԳԽ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ (ԱՌԱՆՑ ՆԱԽԱԲԱՆԻ)

1. ԽՍՀՄ-ի և Ադրբեջանական ԽՍՀ-ի քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ, ներառյալ Լեռնային Ղարաբաղը, գնահատել որպես պետական ահաբեկչության, իսկ հայ ժողովրդի նկատմամբ՝ ավանդական դարձած ցեղասպանության քաղաքականություն:

2. Պահանջել ԽՍՀՄ-ից՝ անհապաղ հանել իր ներքին զորքերը Լեռնային Ղարաբաղից և Հայաստանի այլ շրջաններից:

3. Յուրաքանչյուր ոտնձգություն Լեռնային Ղարաբաղի նկատմամբ գնահատել որպես ագրեսիա Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Արտաքին ագրեսիայի դեպքում ինքնապաշտպանության նպատակով օգտագործել Հայաստանի Հանրապետության բոլոր հնարավորությունները, այդ թվում՝ նաև ռազմական:

4. Հանձնարարել Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովին նոօրյա ժամկետում ներկայացնել 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» և 1990 թվականի փետրվարի 13-ի «ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի որոշումը անօրինական ճանաչելու մասին» որոշումից բխող Լեռնային Ղարաբաղի (ԼՂԻՄ, Շահումյան, Գետաշեն) շրջանները Հայաստանի Հանրապետության վարչատարածքային կազմի մեջ մտցնելու վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների մասին օրենքի նախագիծ:

5. Հայաստանի Հանրապետության տեղական խորհուրդների ընտրությունների մասին օրենքին համապատասխան Լեռնային Ղարաբաղում տեղական խորհուրդների ընտրություններ նշանակել 1990 թվականի դեկտեմբերի 9-ին: Այդ ընտրությունները կազմակերպելու համար ստեղծել պատգամավորական հանձնաժողով:

6. Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի 1990 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին» որոշման գործողությունը տարածել Լեռնային Ղարաբաղի (ԼՂԻՄ, Շահումյան, Գետաշեն) վրա:

7. Հանձնարարել Գերագույն խորհրդի պաշտպանության և ներքին գործերի հանձնաժողովին՝ երկու շաբաթվա ընթացքում ներկայացնել «Հայաստանի Հանրապետության ազգային բանակի մասին» օրենքի նախագիծ:

8. Դիմել արտերկրի հայությանը՝ բոլոր միջոցներով սատար կանգնել մայր հայրենիքի պաշտպանության գործին:

9. Դիմել ՄԱԿ-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախ պետականության վերականգնման գործընթացը արտաքին միջամտություններից զերծ պահելու նպատակով սահմանել միջազգային վերահսկողություն:

## ՄՈՍԿՎԱՅԻ, ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ «ՓՈԽԶԻՋՈՒՄ» ՏԱՐԲԵՐԱԿԸ

(Արցախյան հարցի լուծման Մոսկվայում մշակված «փոխզիջողական» տարբերակը ստացել է «Պրիմակով-Նիշանովի ծրագիր» անվանումը)

Համարել ուժը կորցրած ԼՂԻՄ-ի վերաբերյալ Հայկ. ԽՍՀ-ի, Ադրբ. ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի բոլոր որոշումները, այդ մասին հանդես գալ համատեղ հայտարարությամբ:

Վերականգնել ԼՂԻՄ-ում իշխանության մարմինները, ԼՂԻՄ-ում անցկացնել Ադր. ԽՍՀ-ի Գերագույն խորհրդի, այնուհետև մարզխորհրդի և տեղական խորհուրդների ընտրություններ: Ընտրությունների մասին օրենքը ընդունել Ադր.ԽՍՀ-ի կողմից, միաժամանակ ԼՂԻՄ-ի բնակիչներից ստեղծել համաձայնեցնող հանձնաժողով (ադրբեջանական կազմկոմիտեն լուծարվում է նախօրոք):

Որոշել ԼՂԻՄ-ի բոլոր ընտրովի մարմիններում հայերի և ադրբեջանցիների մասնակցության չափը, ըստ բնակչության տոկոսային հարաբերության:

Ընդունել և երաշխավորել ԼՂԻՄ-ի կարգավիճակը, որպես ադրբեջանական ինքնավար կազմավորում: Ընդունել Ադր. ԽՍՀ համապատասխան օրենք ԼՂԻՄ-ի մարզխորհրդի հետ համատեղ, ԼՂԻՄ-ի կարգավիճակի և նրա ինքնավարության երաշխիքների մասին:

Վերացնել արտակարգ դրությունը ԼՂԻՄ-ում: Անհրաժեշտության դեպքում Ադր.ԽՍՀ դիմումով որոշ շրջաններում տեղաբաշխել ԽՍՀՄ ՆԳՆ-ի ներքին զորքերը:

Ստեղծել երկու հանրապետությունների կոնֆլիկտային հանձնաժողով: Հայաստանի և Ադր.ԽՍՀ-ի միջև ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի վերահսկողության տակ ստեղծել հինգ կմ-ոց սահմանային գոտի:

Վերացնել բոլոր տրանսպորտային շրջափակումները: Այդ հարցի պատասխանատվությունը կրում են երկու հանրապետությունների կառավարությունները: Միմյանց նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու դեպքում պատասխանատվությունը կրում է ԽՍՀՄ-ը:

Փոխադարձաբար հատուցել փախստականների կրած վնասները:

Երկու հանրապետությունների իշխանության բարձրագույն մարմիններին հանձնարարել իրականացնել երկու ժողովուրդների փոխհարաբերությունների բարելավմանն ուղղված միջոցառումներ: Ծրագրի իրականացման վերահսկողությունը կատարել ԽՍՀՄ Ֆեդերացիայի խորհրդի կողմից:

